

«ԱՆԱՆՈՒՄ»-Ի ԸՆԹԵՑՈՂՆԵՐՈՒՆ

Ճրանասյի ազատադրումէն անմիջապէս յի-
տոյ որոշեցի վերսկսել «ԱՆԱՆՈՒՄ»-ի հրատարա-
կումը զոր դադարեցուցած էի գերման դրաման
չբնակին: Յայտարարեցի որ հանդէսէս այդ վե-
րբերումը տեղի պիտի ունենար տարին երկու
թիւ հրատարակ հանելու ձեւով: Այդ յայտարա-
րութիւնը կէս տու կէս զործադրեցի 1946 եւ 1947
առիթներու ընթացքին: 1948ի առաջին թիւը իր
ժամանակին լոյս տեսաւ, բայց երկրորդ թիւը
գծու չէ երեւցած, հակառակ որ 1949ի Յունուարը
վերջանալու մօտ է: Ոմանք ատկեց հետեւուցեր
են թէ «ԱՆԱՆՈՒՄ»-ին կեանքը՝ նիւթական միջոց-
ներու անբուսականութեան հետեւանքով՝ վրանդի
մէջ է: Ճիշդ չէ տտիկա: Եթէ լրջային կարգ մը
ծանր աշխատութիւններ զոր ինչ ինչ ազգօգուտ
կազմակերպութեանց անգամակցելուս համար
հարկադրուած եմ կատարել, եթէ բոլոր ուժեռս
ու ժամանակս «ԱՆԱՆՈՒՄ»-ին յատկացնէի, ան շատ
տեւիլ բաժանորդներ կ'ունենար եւ ես կարող
կ'ըլլայի տարին ոչ միայն երկու թիւ, այլ վեց
թիւ հրատարակ հանել, որովհետեւ «ԱՆԱՆՈՒՄ»,
հակառակ իր անկանոն հրատարակութեան, բա-
րեկամներ, դնահատողներ շատ ունի: Բայց ես
յե՛մ կրնար թերթիս նիւթական շահերը պաշտպա-
նելու համար հրաժարիլ քանի մը ազգօգուտ
կազմակերպութեանց զործակցելով հայրենա-
կիցներու ծառայութիւն մատուցանելէ: 1948ի

երկրորդ թիւը գրեթէ ամբողջապէս տպուած էր
քանի մը ամիսներ առաջ. բայց ես չուզեցի զայն
հրատարակ հանել, քանի որ չէի կրցած շարա-
դրել Գրոնիկը զոր ծրագրած եմ եւ որուն մէջ
հանրային այլազան հարցերու վրայ՝ ու մա-
նասանդ մեզմէ առյաւհտ բաժնուած մեծարժէք
հայրենակիցներու ամբողջ հոյլի մը մասին՝ մը-
տածուած արտայայտելու պարտականութիւնն ու-
նիմ կատարելու: Եստե՛ր դանդատեցան անցեալ
տարի «ԱՆԱՆՈՒՄ»-ի վերջին քանի մը թիւերուն
մէջ դատմ լրջամտուն համար իմ Գրոնիկներս,
որոնց լրջութիւնը, անկեղծութիւնը եւ անկողմ-
նակալութիւնը դնահատողները բաղմաթիւ են (եւ
ատոնց մէջ կը գտնուին հեղինակաւոր հայ մեծ
դէմքեր): Այդ Գրոնիկներս, իմ ըմբռնումովս,
հրատարակագրութիւն չեն, զրական արտադրու-
թիւններ են, որով այժմէութեան ու հատուա-
ծական պայքարի վրայ չէ որ դիտաւորապէս կը
կրթընին, այլ դրուած են այնպիսի ոգիով մը եւ
ոճով մը որ տարիներ ետեքն ալ ընթերցողը ա-
նոնց մէջ կը գտնենայ տեւական ճշմարտութիւններ
գտնել: Ահա ինչու որոշեցի «ԱՆԱՆՈՒՄ»-ի 1948ի
երկրորդ թիւը հրատարակ հանել՝ յատկապէս
Մարտ ամսուան վերջերը՝ 1949ի առաջին թիւին
հետ միասին, որ պիտի պարունակէ շատ ընդար-
ձակ ու բաղմամբար Գրոնիկ մը:
Փարիզ, 25 Յունուար 1949

Ա. Գ.

